



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5183

Հայ - չուսների Թէզրանի ԿՈՄԻՑԵԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՄԻԱՅՆ Ա. ԱԼԹԵՎԵԾ
ԹԲԻՔ. Ա. ԹԻՄՈԽԵՆԻ

ՆԻՐԻՆԸ ԹԻՐՁՐԴՅԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԿԱՊԵՐԻՐ, 29-1924

ԹԷՀՐԵՆ

9(47.925)

U-34

այսեւ ՇԹՈՓՈՐ, ԹԷՀՐԵՆ

9(47.925)
U-34

ՀՐԱՑ. 20Խ—ՀՈՍԱՆՔԻ ԹԵՂԻՐԱՆԻ ԿՈՄԻՏԵՔԻ

443

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ


ՄԵՄՈՆԻ Յ. ԱԼԹԵՐԵՆ
ԹԱՊ. Ս. ՍԻՄԻՈՆԵՆ

ՆԻԿԻՆԱՌ ԽՈՐԴՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

4-րդ ՏԱՐԵԴԱՐԱՐ

ՆՈՅԵՄԲԵՐ, 29-1921

ԹԵՂԻՐԱՆ



Տպարան "Բօսֆօլ", Թէհրան


IV ՏԱՐԵԴԱՐՁԸ

Շինարարական աշխատանքի և համատարած
խաղաղութեան մի գոյացուն տարի ըոլորեց Հայաս-
տանը: Տնտեսական բարգաւաճման և կրթա-կուլտու-
րական յառաջադիմութեան Հերկիւլեան թափը զգաց-
ւեց, մեր փոքր երկրի փոքրաթիւ բնակիչների կողմից.
մի թափ, որ մի տարւայ ընթացքում, երկիրը վերաշննեց
այնպէս, որ անհաւատալի է թւում, այն, անհաւատալի
բայց իրականութիւն, այն բացարձակ իրականութիւնը
որ կերտեց բանւորի մուրճը, զիւղացւ մանգաղը,
մտաւորականութեան մտրի թուչքը, երիտասարգու-
թեան աւելնը, ժողովրդական լայն խաւերի կորովը
և վերջապէս զեկավար տարրի խելացի, զուսով,
զգուշաւոր և միաժամանակ տնտեսականի մէջ իւլ-
զախ ու անվհատ քաղաքականութիւնը:

Անցնում է չորս տարի այն օրից, երբ տոսաշին
անգամ, խորհրդային կարգերի փողը հնչեց Արարատի
ստորսուում: Անցողակի շրջանի բնական շփոթը տի-
րեց ամեն տեղ, տարակուսանք, ուրախութիւն, հա-
կասական լրեր, և վերջապէս այն բոլորն ինչ որ
բնական էնման դրութան մէջ: Բայց անցաւ այդ մօ-
մենաը և ժամանակը, այն էլ շատ կարճ ժամանակը
ապացուցեց որ կարող են այն ձեռքերը, որոնք ստան-
ձնել են զեկը և ուժեղ այն ուսերը որոնք վերցրել են
մեր աւեր երկրի վերաշննութեան զործը:

2004

87985-42



374-97

Խորհրդային Հայաստանի այս 4-րդ տարեդարձին ամեն մի հայ, որ ամենաքիչ չափով զգացում ունի դէպի իր հայրենիքը, և իր ուղեղում չե տեղաւորել ինչ որ աւանտիւրիստական հովեր, չի կարող անկեղծօրէն չոգեսորելիր եղբայրների, անգուշ ջանքերի շնորհիւ վերածնւած, վերաշինւած այն երկրով որ կոչւում է Հայաստան։

Մեծ է կատարւած գործը. աւելի մեծ է նաև մեր գաղութներում ապրող հայերիս պարտականութիւնը դէպի այդ գործն ու դէպի այդ գործի գարբողները։ Եւ այսօր աւելի քան երբէք. որովհետեւ այսօր ապացուցւած է որ մենք, որպէս ժողովուրդ. Ընդունակ ենք ապրելու համերաշխ միւս ժողովրդների հետ, ընդունակ կատարելու մեծ գործեր և վերածելու մի քայքայւած ու աւել երկիր բարգաւած ու շնչ հայրենիքի։ Ու ինչքան այդ ինքնավստահութիւնը մեծանում է այնքան մեծանում է նաև գործի ծարաւը, իսկ գործ զեռ շատ կայ անելու, և ահա գործի յաջողութեանն է որ պէտք է նպաստի, գաղութահայը ամեն միջոցներով։

Զախ Հոսանքը ինչպէս միշտ կանգնած է պաշտպանելու խորհրդային Հայաստանի հիմունքները և այդ ուղղութեամբ չի խնայելու ոչ մի ջանք որ կարելի եղածին չափ իր ոյժերը տրամադրի այդ վսեմ և նւիրական գործին, որովհետեւ քանի կայ հայրենիք առանց ազգամիջնական կոփեան կոփեանիքի, առանց աւանդիւրիստ քաղաքականութիւնների, առանց կապիտալիստական ճնշումների ու ըռնապետական կարգերի, այլ շնա-

քար աշխատանք, հաւասարութեան և եղբայրութեան կարգեր, խելացի ու կշռադատ քաղաքականութիւն, հայ ժողովուրդը կարող է ապրել հանգիստ ու խաղաղ ու ապաքինել գարերի ստրկութեան ու տղիտութեան անհամար ու այլաղան վերքերից։

Ողջոյն գործի ու աշխատանքի հերոս մարտիկներին։

Ողջոյն այն հսկայական ձիգերին ու ջանքերին, որոնք կոնցին ու կոնցին Հայաստանի մերկայ ձականագիրը։

Ողջոյն խորհրդային Հայաստանի երիտասարդ, բայց խելացի դեկանարներին։

ՀԱԽ ՀՊՍԱՆՔ

29 նոյ. 1924

Թէհրան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Խորհրդային Հայաստանի շորբորդ տարեա-
ղարձի նախօրեակին գուգաղիպօրէն մենք ստա-
ցանք Հնդկաստանի բնակիչ՝ յայտնի հայագէտ ու
պատմաբան Պ. Մեթեանցի «Հայաս-
տանի Հանրապետութիւնը» գրքոյկը, որը բովան-
դակում իր մէջ այդ նիւթի մասին նրա կարդացած
մի դասախոսութիւնը, Կալկաթայում սոյն թիւ
29 Յունիսին Անգլիերէն լեզով:

Ի նկատի ունենալով այդ դասախոսութեան
այժմէականութիւնը և այն որ այդ նշանաւոր հայ-
րենասէրն է որ մեր հոսանքի բարեկամն է ու ա-
մենաջերմ համակիրը, և որը առաջինն է Հնչեց-
նում Խորհրդային Հայաստանի գովքը Հնդկաս-
տանում, մենք թարգմանաբար արտատպում ենք
որոշ քաղլածքներ այդ դասախոսութիւնից, ո-
րոնք միաժամանակ և տալիս են Հայաստանի նը-
շանակութիւնը և այն միծ ու սրբազն պարտ-
քը որ ընկնում է զաղութների հայութեան վրա
հանդէպ հայրենիքի,

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս դասախոսութիւնը տպւում է Կալ-
կաթայի հայ համայնքի մի քանի նշանաւոր ան-
դամների խնդրանքով, որոնք իրենցից անկախ՝
կամ հիւանդութեան և կամ նախօրոք բռնւած
լինելու պատճառով բացակայ էին. Միաժամա-
նակ հրատարակում է նաև, ելէ ոչ որպէս կըր-
թեցուցիչ մի պարագայ, գոնէ որպէս տեղեկու-
թիւն, ալս մեծ քաղաքի այն բոլոր հայերի հա-
մար որոնց՝ ամեն ինչ կլանող ու իրեն ենթար-
կող կանաչ սեղանները (թղթախաղ) և հաւասա-
րապէս զրաւող սինէմանները արգիլել էին իրենց
մի թանգագին ժամը զոհաբերելով գալ մի դա-
սախոսութեան, որտեղ ոչ հայեր (հնդիկներ, ան-
գլիացիներ և իտալացիներ) ժամանակ էին գտել
գալու և լսելու մի հին քաղաքակրթութիւն ու-
նեցող պատմական ժողովրդի փառաւոր գոր-
ծունէութեան մասին։

Եր' բ պիտի Հնդկաստանի անտարբեր ու
անզգայ հայերը, որոնք լեզուններ են կազմում,
ըմբռնեն որ բացի զրամ դիզելուց և հաճո-

յամոլութիւնից (որի մէջ նրան անյուսալիօրէն ընկղմած են) նրանք ունեն մի ուրիշ պարտականութիւն—և մի ուրիշ պարտականութիւն դէպի իրենց ազգը որը փիւնիկի նման բարձրացել է այժմ իր աճիւնից, մի նմանը չունեցող գերութիւնից և 500 տարւայ ստրկութիւնից?

Թող նրանք յիշեն և լաւ յիշեն, որ Հայստանը սպասում է որ իւրաքանչիւրն իր որդիներից չնայելով թէ երկրագնդի որ անկիւնում է նա բնակւում—կատարի իր պարտքը դէպ իր հայրենիքը, որ մի մեծ վերածնման դարավլիսի շէմքին է կանգնած, շնորհիւ այն գնահատելի ջանքերի և անսպառ գործունէութեան որ ցուցագրեց, Հայաստանի սօցիալիստական խորհրդակին հանրապետութիւնը, որի կարող և ապահով ձեռքերում երկրի ճակատագիրն է վստահած և այս հանգամանքում պիտինկատել նաև շատպարգ պատճառով—որ—այն տխուր ու սոսկալի փորձից յետոյ որ առաջին հայկական Հանրապետութիւնը այն երկու կէս տարւայ կեանքում, երբ տաք գլուխ, անփորձ, անպատասխանատու և շահասէր դաշնակցականները, որոնք բազկացած

էին շառլատաններից, ուսուցիչներից, բանաստեղծներից և վերջապէս աւազակներից, առել էին կառավարութեան դեկը իրենց ձեռքը և որոնք շատ շրտով հայկական պետութեան կառքը բշեցին դէպի անկման անխուսափելի անդունդն—աւելի լաւ ձեռքերի չէր կարելի յանձնել, Բայց նախախնամութեան աներենոյթ ձեռքը ազատեց մանուկ Հանրապետութիւնը հոգեբանական մօմենտին վերջնական կործանումից, հայ բոլշևիկների հերկիւլեան ջանքերի շնորհիւ:

Տես կարող արգեօք այս երկրի հայերը, իրենց անսահման հարստութեամբ և արեմտեան կրթութեամբ և իդեալներով հետեւ իրենց հայրենակից հնդիկների օրինակին, որոնք իրենց երկրի պատճառով լարում են ամեն ջիղ, տանում ամեն տեսակի զրկանք և անում ամեն զոհողութիւն:

Յամինայն դէպս, ես չեմ սպասում, որ այս երկրի հայերը, որոնք բրիտանական մարդասէը տիրապետութեան տակ բարգաւաճել և նիւթապէս ու մտաւորապէս յառաջացել են, թողնեն իրենց հանգիստ տները և զաղթեն

Հայաստան զբաղւելու հոդագործութեամբ։ Քաւ լիցի, որովհետև բացարձակ խելափարութիւն կլինէր իմ կողմից այդպիսի լիմար առաջարկ անել, քանի որ մեր միլիօնատերերը բնականօրէն չեն կարող տեղափոխել իրենց մեծ առետրական ձեռնարկները, մեծաշուր գղեակները և հոյակապ շինութիւնները Երևան, բայց նրանք կարող են իրենց անսահման հարստութեամբ օգնել կործանաւեր հայրենիքի վերաշինութեան գործին, այնպէս ինչպէս Եւրոպայի, Եգիպտոսի և Ամերիկայի հայերը անումեն, որովհետև միայն այդ դէպքում նրանք կարող են ապացուցել, որ իրենք արժանաւոր զաւակներն են մի մեծարժան հայրենիքի, որը խոստանում է լինել, ոչ հեռու ապագայում, մէկն աշխարհի առաջացող և յառաջադիմող երկրներից, այժմ երբ խաղաղութիւնը՝ բարզաւաճման այդ նախավկան, իշխում է անսահմանօրէն ամբողջ երկրում։

Մի խօսք ես։ Մալարիայի ուրականը հնձում է անխնայօրէն երկրում և անզթօրէն գործում այնպիսի աւերներ, որ միայն նրանք կհասկանան որոնք եղել են ենթակայ այդ

գարշելի հիւանդութեան։ Հայաստանի պետութիւնից իմ ստացած վերջին լայտարարութիւններից երեսում է, որ անտեղ մօտաւորապէս 350,000 հոգի տառապում են Սսիական Մալէրիայից, որը արդիւնք է սննդի անբաւարարութեան և քինինի բացարձակ պակասին։ Արդեօք չի գտնվի մի բաշեացակամ հայ Հնդկաստանում, Բուրմայի Նեղուցներում, Զաւայում կամ Զինաստանում, որպէս մի իսկական մարդասէր որը ուղարկի մի 20,000 առևնսանոց քինինի տուփ Հայաստանի կառավարութեան, եթէ ոչ ի սէր ուրիշ բանի, գոնէ մեղմացնելու մարդկային տառապանքը—որովհետև 20,000 առևնո քինինը միջոց կծառայի ազատելու մի քանի հազարաւոր կեանքեր, որոնք կազմելու են ապագայ սերունդը մեր հայրենիքի, որը կորել էր և այժմ գտնւած է վերածնւելով նորից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վեց տարի առաջ, կամ աւելի ճիշտ 1918 թվի մայիսի վերջերին, երբ Մեծ Պատերազմը շարունակում էր ամբողջ կատաղութեամբ և երբ Եւրոպայի բաղդը դրւած էր նժամի մէջ, մի զարմանալի տեսարան երնաց Հայաստանում:

Բիբլիական հոչակ ունեցող պատկառնի Արարատը, որի վըսյ նոյի տապանը հանգստացաւ Զրհեղեղից յետոյ, երկունքի մէջ էր և 1918-ի մայիս 28-ի կէս զիշերին ծնեց ոչ թէ մի մուկ. ինչպէս մեծ սարը առակննրի մէջ, այլ մի առօղջ և կորովի զաւակ, որին անմիջապէս չ. Յ. Գաշնակցութիւնը երկանում մկրտեց և անւանեց «Արարատիան Հանրապետութիւն»:

Մի դող, որի նմանը տեսնւած չէր երբեցէ անցաւ Արարատիան պատմական երկրի մի ծայրից միւսը, ելեւ տրախացնանելով ամեն ինչ, թէ չնշաւոր թէ անշունչ. և Հանրապետութեան ծնունդը ծանուցանող լրերը պատճառ դարձան միծ և աննկարազրելի ուրախութիւնների ամբողջ երկրում, որտեղ առքարին և զգայուն երիտասարդութիւնը ու ծանրաբարոյ ու խոհեմ ծերունները միացած լալիս էին խելացնոր ուրախութեամբ և մատմոլոր սքանչացումով:

Ծիածանը, երկնքի և շար ու մեղաւոր մարդկութեան հաշտութեան այդ գեղեցիկ էմբլէման, որը առաջին անգամ աշխարհի պատմութեան մէջ երկացել է Արարատ սարի գագաթին Տիեղերային Զրհեղեղի ժամա-

նակ նոյի օրեկում տեսնեց Հայաստանի զեղեցիկ հորիզոնում այդ յիշատակելի օրը, ցուցազրելով երկնքի հաշտութիւնը երկար տառապած հայ ժողովրդի հետ:

Ոլբացած Մայր Հայաստանը որը 500 տարուց աւելի ծածկւած ցնցոտիներով նստել էր Անիի, Արմաւիրի, Ծափշատի և Դվինի գառահնեղ աւերակների մոխիքների մէջ, ողբալով ու կոծելով իր ազնիւ ու սիրելի որդիների տխուր բաղդը, յետ գցեց իր խոր սպի մուայլ զգեստներն և մի անգամ ևս զարդարելով նախկին արքայական Կապոյտ, Կարմիր և Գեղին ծածկացով, վերցրեց իր թոյլ թերերի մէջ նորտծին մանուկը և շնորհաւորանքի խօսք ուղղեց Նախախամութեան, որին վիճակից տեսնել իւր որդիների և իր զժբախտ, բայց վսիմ երկրի ազատութիւնը — մի երկրի, որը եղել է մարդկութեան օրօրանը, որովհետեւ Հայաստանից էր, որ ազգերի նախահայրերը գաղթեցին և Սէնաւարի գաշտերում կառուցին առաջին երկնք քերող, Բարելոնի աշարակը:

Հայաստանի ծանրացած միջնոլորտը միտնպամից ելեքտրականացաւ և խռովից հազարաւոր բուերի հանգիսաւը, որոնք հաղարաւոր տարիներ մնացել էին անվերտով Անիի, Արմաւիրի, Ծափշատի, Դվինի և հին Զուղայի փառաւոր աւերակներում և նբանք սամիպւած եղան գնալ գանելու նոր գաշտեր ու արօտներ, թռչելով արեմուտք դէպի Վան, Մուշ, Բիթլիս և Անատոլիայի միւս հայկական քաղաքները, որոնք շնորհիւ ֆանաթիք թիւբ-

քերի չայ Ազգի ամբողջական թնուշնջման ծբազսի վերածւել էին մոխրի, բայց ըստ երևյթին թիւրքիրը մռացել էին, որ մի ազգ որ կարողացել է վերապրել Չենդիզ խանի, Հուլաբուի և Թէմուրլէնիի սարքած ոզակէզներից յետոյ, չնե կարող լմաջնջել նրանց սխառմատիկ կոտորածներով և տեղահանութիւններով։

Բարբառունեաց Գագիկ թագւորի արձանը, որը Անիի հնագիտական Միւլէում թրքական ժամանակաւոր տիրապետութեան ժամանակ գետին էր զցւած, կանգնեց այդ ուրախութեան մէջ և կոչեց ալդ աւերակ մայրաքաղաքի արքայական հոգիներին, մասնակցելու Մայլ երկրի ուրախութեանը, - մի երկիր, ովանդ նրանք երբեմն կառավարել են արդարադատութեամբ և հոյրական հոգատարութեամբ, որով և հնարաւորութիւն արևեց բարզաւաճման ընդունակ և խանդոս քաղաքացիներին շինել աշխարհահռչակ Անիում հաղար ու մի եկեղեցիներ, որոնց վառաւոր աւերակները իրենց անդուգական ճարտարապետութեամբ և օրիգինալ ոճով մինչև այսօր զբաւում են զարմանքը և անսահման սքանչացումը Եւրոպայի ճամբորդների, հնախոյդ ների և հնագէտների։

Արաքսը Հայաստանի Գանգէսը, որն ականատես է եղել այն սոսկալի ողբերգութեան, որը կատարեց իր ափերին 1605 թւին, լսելով «Սբարատեան Հանրապետութեան» ծնունդը թողեց իր ողբաւի մահերգը։

Ախուրեանը՝ Հայաստանի երկրորդ մի գետը կապւած

պատմական յիշատակներով, որը նոյնպէս ականատես է եղել 2էնգիդ խանի թագաւորների կատարած Անիի վերջնական աւերումներին 1239 թւին, հետեւց իր մեծ քոյր Արքոսի օրինակին և իր վշտերը իսկայն փոխւեցին բերկրանքի։

Թէև ընդհանուրի սեփականութիւն չէ, բայց յամենայն դէպս մի պատմական ֆակտ է, որ առաջին հայը որ յղացաւ Հայաստանի աղատազըման միաբը օտարի լծից— Յակովը IV Կաթողիկոս էր, որ եօ հպարտ եմ զգում ինձ յայտաբարելով, որ նա Նոր Զուղայեցի էր, մի քաղաք որ տւել է շատ այդպիսի արժանաւոր զաւակներ։ 1675 թւին երբ Հայաստանը անքում էր պարսիկների եքկաթեայ կրունկների տակ, Յակովը IV կաթողիկոսը հրատարակեց աղգային անկախութեան ծրագիրը։ Իւր մահից յետոյ, որ անդի ունեցաւ 1690 թիւ Կ. Պոլսում, միւսները հետեւեցին նրա հանապարհով և նրանցից որոնք որը սբով, որը զօրիկ գրչով և որը քսակով յարեցին աղգային աղատութեան պազարին կարելի է յիշատակել Խորայէլ Օրի, Աղա Շամիրը և իւր որդին, Աղա Յակովը (Մալքասցի) Աղա Էմին (Կալկաթայի թն.) Միսիթար Բագրատունի, Ալիշան, Արովեան, Թաղիագեան, Նալբանդան, Ներսէս Կաթողիկոս, Ներսէս Պատրիարք Կ. Պոլսի, Խորէն Նար Իէյ Լուսինեան, Բաֆֆի, Արծրունի, Պորթուգալեան, 2էրազ և Խըհի մահ Հայրիկ։

«Արաքատեան հանրապետութեան» ծնունդի լուրը,

բարեգուշակ լուրը տարածւեց ինչպէս հրդեհ, չարաւից
Արաքսի ափերը մինչև Հիւսիսը Ախուրեանի ափերը և Դա-
րաբաղ, արևելքից մինչև արև մուտքը Ալքսանդրօպոլու Կարս:

Բայց բաւ է զգացումը — թողննոք պատկերաւոր և
բանաստեղծական ոճը. և անցնենք արմատական և ո-
լլիս ֆակտերին, որոնք նկարագրում են հանրապետու-
թեան մի նոր ու ուրախ արշալոյսի պատմութիւնը
Հայտաստանում:

«Հկա չարից առանց բարեաց» և այդ հնացած ա-
սացւածքի ճշմարտութիւնը երբէք այսպէս ուժգնութիւն-
չէր յարմարած ինչպէս դուցէ մեծ պատերազմի ժամա-
նակ, որն իր զուգընթաց տակնուվրայութեամբ և բուռն
ցնցումներով առաջ բերեց այնպիսի պատմական դէպքեր,
որ ամբողջովին փոխեց Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի
դանագան երկների քարակեղերը:

Զօրեղ պետութիւններ փշրւեցին և ընկան բռնակալ
միապետներ կամ անհետացան ինչպէս Յարը և կամ հե-
ռացւեցին աշխարհի քաղաքական արենայից, ինչպէս
կայզերն ու իր հետևորդները,

Շատ ճիշտած և ունակոխւած ազգեր և ցեղեր
որոնք հարսիւրաւոր տարիներ սմբում էին զօրեղ բռնա-
կալութեան երկաթէ կրոնների տակ, սատացան իրենց
քաղաքական անկախութիւնը, որոնք եթէ չլինէր մեծ
պատերազմը կշարունակէին ապրել գերութեան ու ըս-
տարկութեան մէջ մինչև դուցէ աշխարհի վերջը և մատեր-

հալիստ Եւրոպան կնայէր, որպէս մի անզգայ տկանատես:

Մեծ պատերազմը, Թողնելով նքա սոսկալի աւեր-
ները, առաջ բերեց մի շարք բարիքներ, որովհետեւ դա-
ժչ միախն ուղարկեց Եւրոպական քաղաքակրթութիւնը,
բայց որոշ ազգերին ինչպիսին են Իրանդ, Հունգար, Լեհ,
Հայ, Վրացի, Արաբ և Հրեայ, որոնք ճնշում
էին իրենց սեփական երկրում օտարի լծի տակ, տւեց
ցանկալի ազատութիւն։ Պատերազմը այսպիսով առաջ
բերեց մի քանի հանրապետութիւններ ոչ միայն Եւրո-
պայւում, այլ նաև Կովկասում. և այդ ժամանակաշրջա-
նում զոյսութիւն ստացած հանրապետութիւններից, Հա-
յաստանի Հանրապետութիւնն է որ ուելի արժանի է
ուշաղբութեան, որովհետեւ նա այդ ազատութիւնը ա-
պահովեց ոչ թէ ուրիշների օգնութեամբ, այլ միայն իր
ձեռքիրավի։

Սոտառը ապէստոն տարի Ռուսահայերն ու
Թրքահայերը առաջ տարան տեական ակտիւ պլոտա-
կանդա իրենց անօգնական ու դժբախտ հայրենակիցների
ոզատագրման համար թրքական լծից, որը սպաւնում էր
քնաջինչ անհել Տաճկաստանի արևելեան նահանգների՝
Անատոլիայի կամ այսպէս ասած Թրքահայաստանի ամ-
բողջ հայութիւնը։ Բայց որովհետեւ հրաշքները չեն վեր-
ջացել, երբեմն պատահում է որպէս այդ հրաշքը որ

հայերը յաջսղեցին ձեռք բերել մի հանրապետութիւն. թէ ոչ թրբական հողի վրայ ինչպէս ծրագրել էին այդ մուսասատանի հարուստ նահանգներից մէկը, որը հայ աղպի Հայուններն է 4000 տարիներից ի վեր. Նւ մի տարօրինակ զուգագիւղութեամբ Հայկական Հանրապետութիւնը ծնունդ առաւ պատմական Արարատի սառսառում, որը Յարական Առաստան 1828 թւին հայերի օգնութեամբ որոնք ղեկավաբուժմէին Թօֆիլիսեցի ներսէ Արքեպիսկոպոսի (1843 կաթողիկոս) միջոցաւ զբաւեց Փաթալի Ղանից:

Ահա թէ ինչպէս Հանրապետութիւնը ստացաւ իր գոյութիւնը: Յանկարծակի և անոպասելի անկման պատճառով, 1917 թւի վերջերին Անդրկովկասի զօլքերը կանչւցին լեցնելու Սրբածեան գատարկւած դիրքերը և Օնդրկովկասի այս ստիպողական գատարկումը առաջ ընթաց Հայկական անկախութեան հողերտնական մօմենտը և զարմանալին այն է որ Գերմանիան տուաշինն էր որ պաշտօնատիւ ճանաչեց այդ անկախութիւնը, որից յետոյ միայն Եւրապական միւս պետութիւններն, որոնց մէջ նաև մեր գոռանգական թշնամի թուրքերը:

Բայց հայերն, որոնք պատերազմի սկզբից կուել էին մուսական բանակի հեա թէ Կովկասեան և թէ ուրիշ քրօնակերում լրենց սիրելիմ թշնամի թուրքերի դէմ, չէ՞ վիճակած խալաղութիւն վայելել, որովհետև հենց անկախութեան յայտարարութեան հետ Ազէրքէջանի թափարները Յըհելքից և փորք Ասիայի թուրքերը Արեմութիւնը, ոկսեցին նեղել հայերին:


374 - 97

Հ. Յ. Դաշնակցութիւնը շարունակեց կառավարել երկիրը մինչև որ չնորհիւ արտաքին ու ներքին ձնչումների հայերը ստիպւած եղան հայցելու մուսասատանի օգնութիւնը, մի բան որ ունեցաւ իր անմիջական օգուտը, որովհետև թուրքերն իսկոյն ձեռք վերցրին իրենց յարձակումից և Հանրապետութիւնը որը վատնգաւոր դրութեան մէջ էր, աղատւեց:

Հայ բոլցեկները անցան գործի գլուխ և Հայաստանը նոյ. 29, 1920.ին դարձաւ Սօվետական Հանրապետութիւն:

Պէտք է միաժամանակ մատնանշել, որ ներկայ հայկական Հանրապետութիւնը, ինչպէս նաև Վըաստանն ու Ազգը չանց, թէ իսորհբեյին կարգեր են ընդգրկել, բայց բոլորովին անլախ են Սօվետական Առաստանից, երկրի ներքին և ազմինիստրամիտի գործերի մէջ. միայն աբտաքին քաղաքականութեան առթիւ նրանք պէտի խորհրդակցեն Մօսկովյի հետ:

Ուրեմն եթէ հայերը, իրենց վատնգի բոպէին իրենց բախտը չկապէին Խումների հետ, Թօւրքերը որոնք հայի արեան ծարաւ են եղել շարունակ, թէկ 500 տարիից ի վեր շարունակաբար խմել են, չէին թոյլ առաջ անօգնական հայերին, առաջ առնելու երկրի վերաշինութեան գործը քանի որ մհծահոգի և ազատութեան գործական պետութիւնը Անդրկովկան կամ Անդրկովկան պատմութեան մէջ է:



շուտ կցանկանաը տեսնել հայերին ծովի յատակում
քան թէ օդնելով նրանց մի տատասկ տնկէր, իբ ոի-
րեցեալ եղբայրների — թուրքերի կողքին:

Այս էր Քրիստոնեայ Եւրոպայի մայնութիւնը
երբ հայերը շրջապատռած բոլոր կողմէրից գտան իրենց
միակ ձարը և ապաւինեցին Խորհրդային Ռուսաս-
տանին:

Մինչև այն ժամանակ, որ նրանք լոյտ կմնան Սօվետ
Ռուսաստանին և կյարեն Լենինի վարդապնատվթեան որի
մէջ է իրենց միուկ շահը, նրանք կապրեն՝ հանդիսաւ
և հնարաւորութիւն կունենան, մշակեու իրենցքարերի հաղը:

Մի թղթակից Սովետական Հայաստանի մայրաքաղաք՝ Եր-
ևնիկից գրում Ալքսանկրուայի հայթերթերից մէկին որ կեան-
քը Հայաստանում նոյնքան խաղաղ է, ինչպէս Միա-
ցեալ նահանգներում: Այնուղ ոսվետական կարգերի
հետ կայ կտառարեալ ապահովութիւն կեանքի, և սե-
փականութան: Այդ շատ պարզ է, որովհետեւ բօշիւ-
ները ու չեն, ինչպէս ցանկանում են ներկել նրանց-
հակառակորդների խմբակները. եթէ այդպէս չլինէր
խորադատ դիւանագէտ Մակոնալդը չէր ճանաչի
Սօվետական Ռուսաստանին և չէր խնդրի որ Մօսկվան
ուղարկէր իր ներկայացուցիչները կօնդոնի անզօ-
սօվէտ. քօնֆէրանսին որից ոպասուում է թէ քաղա.
քական թէ անտեսական և թէ փինոնսական փայլուն
արդիւնքներ.

Թող մենք երբէք վտառես չլինենք մեր փոքրիկ

Հանրապետութեան ապագայի համար որովհետեւ Սօ-
վետական Ռուսաստանի օժանդակութեամբ, որը շատ
գաւ է տրամադրւած զեպի Հայաստանը, երկիրը
կբարդաւաճի բնական զարգացման մէջ:

Իմ ցանկութիւնը, չէ Բօշկեզմի գովքը ներբողել
կամ փաստաբանել կօմիւնիզմի հիմունքները, այլ
միայն ծանօթացնել Կալկաթայի իմ հայրենակիցներին
այն դէպքերի հետ որոնք պատճառ դարձան Հայաս-
տանի հանրապետութեան գոյութեան, որովհետեւ
թւում է որ շատ քչերն են անդհակ նրա զոյութեան
և ընդհանուր զաղափար կայ որ Հայերն ամրողին
բնաջնջւած են թուրքերի կողմից 1914-1918-ին: Նրա
հետ միասին պիտի յիշատակել նաև որ թուրքերը
որպէսպի կարողանան աղատեւլ փշու «Հայկական
հարցից» որն ոկսեալ Բերլինի ծաղրական Դաշնա-
գրից մինչև այժմ, Եւրոպական գիւտնագիտութեան
սալի վրայ էր, անբնակ դարձրին Թուրքիայի Հայ-
կական վիլայէթները հայ բնակչութիւնից, սիսու-
մատիկ ջարդերով, տեղահանութիւններով և բնա-
ջնջումներով, որոնց դիմաց արիւնաբրու Ներօնի, Աթիւ-
այի Զինգիպատանի, Թեմուր լենկի և այն գործերը
կնսեմանային. բայց այդ բոլորի զիմաց Քրիստոնեայ
Եւրոպան իր ունիցած քաղաքակարթութեամբ և մար-
դապատիրական զաղափարների և իտեալների զրօշական-
բով չշարժեց մի մատ անգամ կասեցնելու զահիճի ձեռքը,

և բնաջնջուող ժողովութեղի տղաղակը միայն խուլ ականջների հանդիպեցին, իրեւ ամօթ ասպետական եւրոպայի: Խոկապէս ասպետական ոգին, որով մի ժամանակ հպարտ էր Քրիստոնեայ Եւրոպան, այս շահառէր, ընկած այլուներ և չափազանցօքէն նիւթապաշտ դարսւմ մհուած է:

Օ Tempora! Օ motes !

Նախ քան վերջացնելու պէտք է մտանանչեմ որ Հայաստանի ներկայ պետութիւնը մէկ միլիոն ու երեք հարիւր հազար բնակչութեամբ զեկավարւում է միմյան հայերի միջոցաւ: Պաշտօնական լեզուն հայերէնն է: Դատարանը, պօսար, հետազրատունը, դօքը ըոլորը հայկական են: Կրթական խնդիրներում մնձաշխատանք է կատարւում և Հայաստանի Համալսարանը, երկրի լուսաւորութեան կենտրոն երևանում պատրաստում, և Հայ ինտելիգենցիալին որոնք պէտք է իրենց ուսութի վրայ տանեն հայրենիքի զեկավարութիւնը ապագայում:

Ծինարարական աշխատանքներ են կուտարւում, որսնք շատ յաջող կերպով են տարւում: Մեծ ջրանցքներ են կառուցում, ճահիճներ չօբացւում, չոր և անմշակ հողեր ուրծի տարիներով ընկած էն անբերը, ուռոգում են ու շահագործւում: Մեծ տեղ է արւած զիւղացիութեան առաջապահութեանը, տանց ջրի ոչ մի երկիր չի կարող ապրիլ ու յառաջադիմել որն ամենամեծ ուղաղրութեան է յանձնւում, վաճառականութիւնն ու առեստութեան

է պետութեան կողմից, երկրի անտեսական յառաջաղիմութեան համար:

Բացւում են թէ զիւղատանեսական և թէ հնագիտական թանգարաններ: Գյաղաքանները կարգի են գրւում և զբուրից հաղարաւոր հատորներ են ուղարկում Հայաստան հայ հայրենասեր գրատէրները, որոնց շարքում ես պիտի յիշեմ իմ մօտիկ գրական բարեկամ Պրօֆ. Կարապետ Բաղմանեանին, որը Փարիզից, ամենայն պատրաստակամութեամբ, իւր 200,000 հատոր զիւր պարանակող գրադարանը նւիրել է Երևանի տղային մատենագարանին: Եղիպատոսի և Հայաստանի հայութիւնը հայ երկրի վերաշնութեան համար ձեւնարկել է հանգանակութիւնների և սինչ այժմ մեծամեծ գումարներ են հանգանակւոծ և լրջօքէն պիտի յուսալ, որ աեղիս հայութիւնը ևս, որի սէրը իր նախնեաց երկրի համար հոչակած է, պիտի հետեւ նպալուսոկ, Եւրոպայի և Ամերիկայի իր հայրենակիցների աղնիւ օրինակին:

Կեցցէ Հայաստանի ներկայ Հանրապետութիւնը: Կեցցէ բոլոր նրանց յիշատակը, որոնք կերտեցին հայի ազատազրման գաղափարը, մի գաղափար, որը թէն 250 տարի է առել, բայց կատարւած քակո է այսօր, իսկ թէ որքան սարսափելի զնով է ձեռք բերւած զա այդ կարող են վկայել բոլոր նրանք մօտկից ծանօթութիւններ ունեն հայ մայր երկրի պատմութեան վերջին 300 տարւայ սկ էջերի հետ: Բայց միթէ արգեօք մեր վիճակակից Յոյները, Պուլարները, Ռումանները, Սերբները, Լեհացիր և հրլանդացիք իրենց աղատազրութիւնը մի օրւայ մէջ ըստացան և առանց ոնէ դոհաբերութեան?

Կեցցէ Հայաստանի Սոցիալիստական և Խորհրդային Հանրապետութիւնը:



5183

12013

ՀՀ Ազգային գրադարան

A standard linear barcode is positioned horizontally across the page, consisting of vertical black bars of varying widths on a white background.

NL0001229

2342

Գինը 2 Դում

ԱՐԴԻՇՆԵՐԸ ՑՈՑԱԿԻՆԻՑ Ե ՀՕԽ-ԾԱ.